

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 1**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ**  
**ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍԻ**

**Կայացած՝ 06-ը ապրիլի 2021 թվական**

**քաղաք Գյումրի**

2021 թվականի ապրիլի 6-ին Շիրակի պետական համալսարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

Նիստին մասնակցում էին ՀՀ Շիրակի մարզի թվով 42 համայնքների ղեկավարներից 39-ը, Երազգավորս, Ղարիբջանյան, Հովտաշեն համայնքների ղեկավարները բացակայում էին հարգելի պատճառով:

Նիստը վարում էր՝ ՀՀ Շիրակի մարզպետ Հովհաննես Հարությունյանը:

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

- մարզպետի տեղակալներ, մարզպետարանի գլխավոր քարտուղարը, խորհրդականները, օգնականները,

- մարզպետարանի վարչությունների և բաժինների պետերը,

- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ,

- մարզի բուժհաստատությունների ղեկավարներ,

- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի ղեկավարը,

- ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Գյումրու բաժնի պետ-տեսուչը:

-- ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն ՊՈԱԿ

«Շիրակ» մասնաճյուղի տնօրենը

- ՀՀ Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը:

Մարզպետը ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի հետևյալ նախագիծը՝

1. ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2021 թվականի առաջին եռամսյակի կատարման մասին:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան*

2. ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2021 թվականի աշխատանքային ծրագրի, առաջին եռամսյակում կատարված հսկողության արդյունքների և մարզի ՏԻ մարմինների կողմից իրականացվող այլ գործառնությունների մասին:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արամ Անտոնյան*

3. ՀՀ Շիրակի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի և առաջիկա ծրագրերի մասին:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Անդրանիկ Նալբանդյան*

4. ՀՀ Շիրակի մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման և վարձավճարների գանձման գործընթացի մասին:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ Չորիկ Խաչատրյան*

5. ՀՀ Շիրակի մարզի համայնքների կողմից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի մշակման ու ներկայացման մասին:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ Կարեն Բարիշյան*

6. ՀՀ Շիրակի մարզի համայնքներում երեխաների իրավունքների պաշտպանության, հնարավոր դեպքերի կանխարգելման և արձագանքման մասին:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Լիլիթ Գորգինյան:*

## **2. Հայտարարություն**

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեղան, օրակարգը հաստատվեց:

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը, մարզպետը հանդես եկավ համավարակի դեմ պայքարի զգոնության կոչով: Նա մասնավորապես նշեց, որ հատկապես վերջին օրերին նկատվել է կորոնավիրուսով հիվանդացության ցուցանիշի աճ, որը մտահոգվելու առիթ է տալիս, պետք է առավել զգոն լինել, համագործակցել միմյանց հետ և ամեն ինչ անել համավարակի տարածումը կանխելու ուղղությամբ: Համայնքների ղեկավարներին առաջարկեց ուշադրության կենտրոնում պահել համայնքների վարչական տարածքներում գտնվող հատկապես ռիսկային կազմակերպություններին, իրականացնել ախտահարման աշխատանքներ, պահպանել հակահամաճարակային կանոնները: Միաժամանակ շնորհակալություն հայտնեց առողջապահական համակարգի աշխատակիցներին՝ ամենօրյա ռեժիմով համավարակի դեմ պայքարի աշխատանքների կազմակերպման ու իրականացման համար:

Այնուհետև անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

### **ԼՍԵՑԻՆ 1. ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2021 թվականի առաջին եռամսյակի կատարման մասին:**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան*

**(Ձեկույցը կցվում է):**

Մարզպետը կարևորելով համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներում թերացումների բացառումը՝ նշեց որ միայն այդ աշխատանքների կատարմամբ է հնարավոր համայնքներում իրականացնել նոր ծրագրեր, որտեղ առաջնայինը նախաձեռնողականությունն ու նվիրվածությունն է լինելու: Անդրադառնալով համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման երեք ամիսների ցուցանիշներին, մարզպետը մտահոգիչ համարեց մի շարք համայնքներում հատկապես հողի վարձավճարների հավաքագրման ցածր ցուցանիշները և նշեց, որ համայնքների ղեկավարներն այս առումով անելիքներ ունեն: Անհրաժեշտ է տարանջատել պարտաճանաչ ու անբարեխիղճ վարձակալներին և չշարունակել պայմանագրեր կնքել անբարեխիղճ վարձակալների հետ:

Եվս մեկ անգամ հորդորեց սեփական եկամուտների ցածր կատարողականներ ունեցող համայնքների ղեկավարներին՝ շարունակական աշխատանք տանել սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների բարելավման ուղղությամբ:

**ԼՍԵՑԻՆ 2. ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2021 թվականի աշխատանքային ծրագրի, առաջին եռամսյակում կատարված հսկողության արդյունքների և մարզի ՏԻ մարմինների կողմից իրականացվող այլ գործառնությունների մասին:**

*Չեկուցող՝ ԶԶ Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արամ Անտոնյան*  
**(Չեկույցը կցվում է):**

ԶԶ Շիրակի մարզպետարանի ՏԻ և ԶԳՄՅ վարչության պետը նաև տեղեկացրեց, որ մարզի 2 համայնքներում արդեն իսկ ունեցել ենք հեղեղումների դեպքեր և անհրաժեշտ է նախապես պլանավորված ժամկետներում իրականացնել նախատեսված կանխարգելիչ աշխատանքները:

Մարզպետը կարևորեց համայնքների տարածքներում անհրաժեշտ աշխատանքների իրականացումը, կատարվող աշխատանքների վերաբերյալ բնակիչներին իրազեկումը, ազդարարման միջոցների պատրաստի վիճակում գտնվելը և պատրաստակամություն հայտնեց անհրաժեշտության դեպքում ցուցաբերել հնարավոր աջակցություն:

Անդրադառնալով Չեկույցին, մարզպետը շնորհակալական խոսք ուղղեց մարզի համայնքների ղեկավարներին, ոստիկանության, ճանապարհային ոստիկանության աշխատակիցներին, Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիայի, շտապ բուժօգնության կայանի անձնակազմերին, ինչպես նաև մարզպետարանի պատասխանատուներին 2-րդ արցախյան պատերազմի ընթացքում և հետպատերազմական ժամանակահատվածում համագործակցված աշխատանքների և զոհված ու վիրավոր զինծառայողների, անհայտ կորածների և գերեզարկվածների ընտանիքների նկատմամբ ցուցաբերված պատշաճ վերաբերմունքի համար:

**ԼՍԵՑԻՆ 3. ԶԶ Շիրակի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի և առաջիկա ծրագրերի մասին:**

*Չեկուցող՝ ԶԶ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Անդրանիկ Նալբանդյան*

**(Չեկույցը կցվում է):**

Մարզպետը կարևորեց պետական աջակցությամբ գյուղատնտեսական ծրագրերի մասին հանրային իրազեկման ուղղությամբ տարվող աշխատանքների իրականացումը: Գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ Շիրակի մարզը մեծ ներուժ ունի, որին ուղղված ջանքերն անհրաժեշտ է բազմապատկել: Գյուղատնտեսության աջակցության ծրագրերի մասին հանրայնացումը չի ենթադրում, թե դրանց մասին տեղեկատվությունը մարզպետարանից տանել և փակցնել համայնքապետարանների տեղեկատվական հարթակներին, այս ուղղությամբ անհրաժեշտ է կատարել անհատական աշխատանք, համայնքապետերը պետք է կարողանան աջակցել համայնքների բնակիչներին, գյուղատնտեսական ծրագրերի մասին հանրային իրազեկվածության բարձրացման ուղղությամբ՝ ծրագրերից ժամանակին օգտվելու առումով:

**ԼՍԵՑԻՆ 4. ԶԶ Շիրակի մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տրամադրման և վարձավճարների գանձման գործընթացի մասին:**

*Չեկուցող՝ ԶԶ Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ Չորիկ Խաչատրյան*

Չեկուցման վերաբերյալ հարց հնչեցրեց ԶԶ Շիրակի մարզի Փանիկ համայնքի ղեկավար Վարդան Մակեյանը՝ նշելով որ համայնքի վարչական տարածքում գտնվող արոտները զուրկ են խոտածածկույթից և որպես արոտ օգտագործելը գրեթե անհնար է: Բարձրացված հարցին ի պատասխան մարզպետը նշեց, որ առաջիկայում կկատարվեն համապատասխան ուսումնասիրություններ ու պարզաբանումներ, կճշգրտվեն վերանայման մեխանիզմները, որոնց արդյունքներով միայն հնարավոր կլինի լուծումներ առաջարկել:

**(Չեկույցը կցվում է):**

**ԼՍԵՑԻՆ 5. ՀՀ Շիրակի մարզի համայնքների կողմից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի մշակման ու ներկայացման մասին:**

*Չեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, գրոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Կարեն Բաղիշյան*

Մարզպետը ընդգծեց, որ սուբվենցիոն ծրագրերը պետություն-համայնք համագործակցության լավագույն օրինակներ են, դրանք նպաստում են համայնքներում տարիներ շարունակ կուտակված խնդիրների քայլ առ քայլ լուծմանը: Նա միաժամանակ ողջունեց այդ առումով համայնքների ղեկավարների նախաձեռնողականությունն ու կոչ արեց առավել ակտիվ ներգրավվել այդ ծրագրերի իրականացման աշխատանքներում:

Կարևորելով սուբվենցիոն ծրագրերի իրականացումը՝ մարզպետը ողջունեց մարզի համայնքների ղեկավարներին՝ ծրագրերին ակտիվ մասնակցության համար և նշեց, որ ինչքան շատ մարզի համայնքներից սուբվենցիոն ծրագրերի հայտեր ներկայացվեն, այնքան շատ համայնքային խնդիրներ կլուծվեն:

**ԼՍԵՑԻՆ 6. ՀՀ Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից 2020 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ**

*Չեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ՝ Լիլիթ Գորգինյան*

**(Չեկույցը կցվում է):**

**2. Հայտարարություն**

Հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ Ալեքսան Գյոզայանը:

Գարնանային հնարավոր հեղեղումների վտանգները կանխելու նպատակով ՀՀ Շիրակի մարզային փրկարարական վարչության պետը մարզի համայնքների ղեկավարներին կոչ արեց առավել զգոն լինել և համայնքների ինժեներական տեխնիկան մշտապես պահել սարքին ու պատրաստի վիճակում: Նաև անդրադարձավ չորածածկ խոտածածկույթների հրդեհային ղեպքերը բացառելու նպատակով համայնքների բնակչությունն հետ բացատրական աշխատանքներ տանելու անհրաժեշտությանը, հատկապես գյուղական բնակավայրերում, քանի որ գյուղատնտեսական աշխատանքները արդեն իսկ մեկնարկել է և սմանատիպ ղեպքերն ավելի շատ արձանագրվում են հենց գյուղական համայնքներում:

Համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրվեց ապաստարանները կահավորելու և անհրաժեշտ ցուցապաստանները փակցնելու հարցի վրա:

Այնուհետև ՀՀ Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի հայտարարությանն արձագանքեցին ՀՀ Շիրակի մարզի Փանիկ, Նոր Կյանք, Հայկավան համայնքների ղեկավարները և նշեցին իրենց համայնքների վարչական տարածքներով անցնող հեղեղատարների անմխիթար վիճակի ու դրանց մաքրման ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերի մասին:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը ՀՀ Շիրակի մարզպետ Հովհաննես Հարությունյունը նշեց, որ 2021 թվականը որքան էլ բարդ ու մարտահրավերներով լի տարի է, միևնույն է նաև աշխատանքի տարի է և պետք է ձգտել առավելագույնին, քանի որ ոչ ոք հապաղելու և երկմտելու այլընտրանք չունի, գլխավոր մոտիվացիան պետք է լինի երկիրն ու մարզը օր առաջ ոտքի կանգնեցնելը: Բոլորս պետք է այս տեսանկյունից նայենք մեր աշխատանքին: Նա միաժամանակ ներկաներին մաղթեց առողջություն, բեղմնավոր աշխատանք և կոչ արեց առավել մեծ ուշադրությամբ ու պատասխանատվությամբ լծվել աշխատանքի, փորձել խնդիրները լուծել սեփական ուժերով, քանզի մեր խնդիրների մասին մեզանից լավ ոչ ոք չգիտի, դրանց լուծման ուղիներն էլ մենք պետք է ամենից լավ իմանանք:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ՀՈԿԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Արման Մելքոնյանը*